



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ 1827-ԻՆ ՕՇԱԿԱՆԻ
ԾԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՂՎԱԾ ՌՈՒՍ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ
ՀԻՇՍԱԿԻՆ

(Յ հոկտեմբեր 1978-ին, 1834-ին էջմիածին քաղաքում
կանգնեցված հուշարձանի առաջ)

Գոհություն եմք տալիս Աստուծո ամենակալին, որ ահա գտնվում եմք այս հուշարձանի կողքին, աղոթելու բյուրավոր ռուս մարտիկների հոգիների համար, որոնք իրենց կյանքը զոհեցին հարյուր և հիսուն տարիներ առաջ, փրկելու համար Արևելյան Հայաստանը հին Պարսկաստանի խավարից ու դաժան հարստահարումներից:

Երախտագետ հայ ժողովուրդը երբեք չի մոռանալու ռուս ժողովրդի զավակների հերոսական սխրանքները և նրանց նահատակությունը: Թող Տերը հավերժ լուսավոր պահպանի նրանց սուրբ հիշատակը երկնքում և այստեղ՝ երկրի վրա, Հայաստանի հողի վրա, ամեն մի հայ մարդու սրտում:

Այս հուշարձանը կառուցվել է 1828-ից մի քանի տարիներ հետո երջանկահիշատակ Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի որոշումով և Մայր Աթոռի միջոցներով, ի նշանավորումն ռուսական բանակի զինվորների նահատակության:

Այսօր բոլոր հայերը, որ ի Հայաստան և որ ի սփյուռն աշխարհի, հիշում են անցյալը, որպեսզի իրենց երախտագիտությունը հայտնեն զոհված ռուս հերոսների հիշատակին, բայց նաև, որպեսզի հստակ տեսնել կարողանան իրենց ազգի ապագա կյանքի ուղիղ ճանապարհը: Վայ այն ժողովրդին, որ հիշողություն չունի, որ չունի հստակ գիտակցությունը պատմական փորձի, որ միջազգային միշտ ալեկոծ, միշտ շփոթեցուցիչ հողմերից տարուբերված կորցնում է իր կենսական շահերի ուղին, երբեմն շլանալով

խաբուսիկ երևույթներից, երբեմն մղվելով գերզգացական պատրանքներից, երբեմն մոլորվելով անհրակահալի խոստումներից:

Հայ ժողովուրդը, որ իր քաջ որդվոց ծով արյան ճանապարհով հասել է մեր օրերի իր ազգային վերածնունդի լուսաբացին, իր պետականության կազմավորման, միշտ ոուս ժողովրդի եղբայրական օգնությամբ, այսօր դարձել է արդեն իր գերագույն շահերին գիտակից ազգություն, իր սեփական ուժերի վրա հավատք ունեցող ազգություն, իր ապագայի նկատմամբ լավատեսությամբ համակված ազգություն: Նաև մի ազգություն, որ գիտե հարգել ու փառավորել հիշատակը իր զավակների հերոսական ճիգերի և զոհաբերումների, որոնք արյամբ ներկեցին հայոց ազատագրական պայքարի ճանապարհը: Սրբազան պայքարի մի ճանապարհ, որի վրա իրենց արյունը թափեցին նաև մեր ոուս եղբայրները և ոչ միայն 1826—28-ի շրջանին, այլև 1915-ին՝ փրկելով երկու հարյուր հազար վասպուրականցի հայերի կյանքը օսմանյան ցեղասպանությունից, 1918-ին՝ իրենց գործոն մասնակցությունը բերելով Սարդարապատի հայոց մեծ հաղթանակին, 1920-ին՝ Հայաստանից դուրս քշելով Քարապետքի փաշայի բանակները և պատռելով Ալեքսանդրապոլի սև դաշնագիրը:

Այսօր այս հուշարձանի առաջ կանգնած պարտավոր ենք հիշել այս բոլորը, պարտավոր ենք գիտակցել, թե պատմությունը ինչ-որ հեռու անցյալում տեղի ունեցած դեպքերի պարզապես մի շարադրանք չէ, պարտավոր ենք զգալ, թե պատմությունը մեզ հետ քայլում է և քայլ առ քայլ հարըստացնում մեր ազգային հավաքականության կենսափորձը: Անցյալի փորձառությամբ լուսավորված պարտավոր ենք հառաջ ընթանալ դեպի մեր ապագան, մեր ուղքերի տակ մեր մայր հողը ունենալով որպես ամուր պատվանդան: Ու այդ պատվանդանի վրա կանգնած և այդ պատվանդանից միայն պարտավոր ենք դիտել համայն աշխարհը ու դատել իրադարձությունները միջազգային կյանքի:

Մենք, Հայրապետ Ամենայն Հայոց, այս հավատամքը, այս վկայությունն ենք բերում այսօր այս հուշարձանի առաջ, մեր ժողովրդի առաջ, մեր վերածնված հայրենիքի առաջ:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի. ամեն:

